

ԲԱՐՅՈՒՅԵՎԻ

ՕՐԱԳՐԻ

ԲՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԵՐԵՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԵԼԵԸ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 7.

1844

ԱՊՐԻԼ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լինուանեաց բաժանումը¹:

ԽՈՒՄԲԻ ԵՐՐՈՐԴ

(Յօդաւոր էնուշանիներ²:

Այս խումբին տակը իյնող կենդանիները ոչ ողնայար ունին և ոչ սպակոր. հապա իրենց մարմինը բոլոր յօդուած յօդուած է՝ պինդ մաշկով կամ կարծր կեղեռվ դրսէն պատած, որ կտոր կտոր և իրարու մէջ անցած ըլլալով՝ իրենց շարժմանը արգելք չեն ըներ. իրենց փորոտեաց անցքը շիփշիտակ մարմնոյն մէկ ծայրէն մէկալը կ'երթայ. և բերաննին ակռաներով պատած է, որ ներս դուրս կըշարժին: Լերդերնին մանր աղիքներէ կամ պղտի գնտակներէ՝ ձեւացած է: Լուսոնց մէջ իրեք զոյգէն պակաս անդամունեցող չկայ, բայց ոմանք ինչուան հարիւրաւոր անդամալ կ'ունենան: Լճքերնուն կազմուածքը պարզ չէ, և խիստ քիչ կըդտնուին որ լսելիք ունենան: Լիրենք ձուածին են, և արիւննին ձերմակ է. բայց օղակաւորներուն՝ արիւնը կարմրագոյն է. ընդ-

հանրապէս իրենց օղակները որ մարմնոյն հաստատուն անդամները կըսեպուին՝ մէկմէկու վրայ կըծալլուին՝ կըշարժին. վասն զի ոմանց անդամներուն ծայրը շարժուն օղակ մը կայ, ոմանցը կակուղ մաշկով մը իրարու հետ կապած է, ոմանցը մէկմէկու մէջ ագուցած, ոմանցն ալ բոլորովին իրարու հետ կապած:

Լուերուրդ խումբը՝ բնագէտներէն ոմանք կակղամիսներէն առաջ կ'ուղէին դասաւորել, ըսելով թէ շատ յօդաւոր ոսկորոտ կենդանիներուն աւելի մօտ կ'երենան՝ իրենց արագութեանը և մարմնոյն կազմուածքին համար, և այլն. բայց աս յայտնի է որ կակղամիսները ոսկորոտ կենդանեաց աւելի կըմօտենան՝ իրենց անդամներուն, շնչառութեանը, մարսողութեանը և մարմնոյն ձեին համար:

(Յօդաւորները չորս դաս կըբաժնուին. այսինքն (ջղակաւոր, լինցեմորթ¹, լարդ² և լիջատ³: լինցուան

1 Տես երես 36, 70: 3 Գ. Գ. Glandules.

2 Գ. Գ. Articulés. 4 Գ. Գ. Annélides.

1 Գ. Գ. Crustacés.

2 Գ. Գ. Arachnides.

3 Գ. Գ. Insectes.

վերջի ատեններս օղակաւորները ու-
րիշ կենդաննեաց կարգը կը սեպուէին .
բայց Վիւլիկ անոնցմէ զատեց և աս
երրորդ խումբին հետ միացուց :

ԴԱՍ Ա .	{ Փողաձեք Թիկնականնք Անականնք	Tubicoles. Dorsibranches. Abranches.
ԴԱՍ Բ .	{ Տասնոտունք Բերանոտունք Երկոտունք Հաւասարոտունք Ականջոտունք Պիսակոտունք	Décapodes. Stomopodes. Amphipodes. Isopodes. Branchiopodes. Poecilopodes.
ԴԱՍ Գ .	{ Լերգաւորք Ընչերակաւորք	Pulmonaires. Trachéens.
ՄԱՐԴԻՔ	{ Բիւրոտունք Թիւտոտունք Այլաբունք Ծծողք Պատենաթեք Ուղաթեք Կիսաթեք Ջցաթեք Հիմնաթեք Թեփաթեք Արագաթեք Երկաթեք	Myriapodes. Thysanoures. Parasites. Suceurs. Coléoptères. Orthoptères. Hémiptères. Nevroptères. Hyménoptères. Lépidoptères. Rhipiptères. Diptères.
ԴԱՍ Դ .	{ () Դակաւորք :	

() ԴԱԿԱՒՈՐՆԵՐՈՒՆ մարմինը՝ ո-
մանց շատ ոմանցքիչ կակուղէ . մար-
միննին օղակ օղակ է , և ընդհանրա-
պէս երկայն ու բարակ . գոյներնին
թռւիս կամ հողագոյն է , արիւննին
ալ կարմիր :

Դանցմէ ոմանք խառնափնդոր ոտ-
ւըներ ունին . ոմանք ոտքի տեղ պղտի
Ճանկեր ունենալով անով կը սողան ,
ինչպէս է փորու ՃՃին . ոմանք ալ ա-
մենեին ոտք չունին , ինչպէս է տըզ-
րուկը :

Դմէնն ալ անոյշ ջրի մէջ կամգետ-
նի տակ կը բնակին : Ը ատ տեսակը
կան որ քարերը կը փորեն ու անոնց
մէջ քաշուած կը կենան , կամ թէ
աւազով իրենց մարմնոյն չորս դին
բոյն մը կը շինեն ու մէջը կը բնակին :
Դնունդ աւնելու համար ուրիշ կեն-

դանեաց արիւնը կը ծծեն , կամ բո-
լորովին զանոնք կը կլեն : Երբոր օդը
ցուրտ ըլլայ՝ լժին տակը կ'իջնան ու
բոլոր ձմեռը հոն թաղուած ու թըմ-
րած կը մնան : Հզրուկները օդին փո-
փոխութիւնը խիստ գիւրաւ կը զգան .
Երբոր քամի ելեկ՝ արագ արագ կը
շարժին . երկինքը ամպոտելուն պէս
մէկէն տղմին մէջ կը քաշուին . իսկ
երբոր որոտալով սաստիկ մրրիկ ելեկ ,
մէկէն ջրին երեսը կ'ելլեն ու անշարժ
կը կենան : Ոյէ որ աս կենդանիներէն
մէկ քանին շիշի մը մէջ դնելով քովն
ալ աստիճանած քանոն մը հաստա-
տուի , տեսակ մը օդաչափ կ'ըլլայ .
և կենդանին քանի որ ջրին մէջ վեր
վար իջնի ելլէ՝ օդին փոփոխութիւնը
կը ցուցընէ . բայց աս տեսակ գուշա-
կութիւնները խիստ Ճիշդ չեն ըլլար :
Դս դասը իրենց շնչառութեն գոր-
ծարանին նայելով իրեք կարգ կը
բաժնուի :

ԴԱՍ Բ . ԽԵՂԵԺՈՐԾ :

Դս պատենաւոր կենդանեաց դա-
սին մէջ կը սեպուին ան յօդաւորներն
ալ՝ որոնց արիւնը շրջանով կը պտըտի .
շնչառութեան համար ձկան ականջի
պէս գործարան ունին , և ոտքերնին
յօդուածաւոր է : Դսոնք գրեթէ ա-
մէնն ալ խեցափարի ու խեցգետիի
կը նմանին . և ինչպէս առաջ ըսինք՝
օղակաւորներէն բոլորովին կը տար-
բերին : Իրենց Ճերմակ արիւնովն ու
ոտուըններուն յօդուածներովը ժըժ-
մունքներուն ու սարդերուն շատ կը
նմանին . բայց լերգային շնչառու-
թիւննին , ոտուըններնուն թիւը և ու-
րիշ շատ յատկութիւնները անոնցմէ
տարբեր են :

Դսոնց մարմնոյն ձեւը տեսակ տե-
սակ կ'ըլլայ . պատեաննին ընդհան-
րապէս մէկ հատ ու մեծ է . գլուխ-
նին կուրճքերնուն հետ անմիջապէս
միացած և փորերնէն բաժնուած :
Ոտուըննին՝ որ սովորաբար հինգ կամ
եօթը ջուխտ կ'ըլլայ , զանազան յօ-

դուածներով իրարու հետ կապած են ու կուրծքերնուն վրայ հաստատուած . և իրենց գլխուն առջեկ կողմն ալ երկու երկայն ու բարակ եղջիւրներ ունին . ունին նաև երկու ջուխտ մկրատ , և փորերնուն վրայ ձկան թեկ պէս գործարաններ որ բանի մը չեն գործածեր :

Այս կենդանիներուն մեծ մասը մը սակեր են : Ոմանք պատիճով մը ուրիշ կենդանեաց արիւնը ծծելով կ'ապրին , բայց գրեթէ ամէնքն ալ կարծր կերակուրներ կը սիրեն , անոր համար իրենց ծամելիքն ալ զօրաւոր է . մեծ մասը ծովուն խորունկը կը բնակին , ոմանք անոյշ ջրի մէջ կամ ցամաքը . և իրենց բնակարանը ժայռերու խոռոշներու մէջ կամ քարերու տակ և կամ աւազի մէջ կը շինեն : Աշխարհքիս մէջ ամէն տեղ ասոնց միսը կ'ուտեն . ոմանք բժշկականութեն մէջ կը գործածուին . ոմանք ալ կան որ մահաբեր են :

Խեցեմորթները վեց կարգ կը բաժնուին , իրենց ականջներուն՝ գըլխուն և ծամելիքին նայելով :

Դաս Գ . Արդ :

Այս կարգին կենդանիներն ամէնն ալ սարդինման են իրենց կազմուածքովը . արիւննին ձերմակ է , ու ոտուրնին յօդաւոր : Խեցեմորթներէն ասով կը տարբերին որ ամէնն ալ ազատ շնչառութեան գործարան ունին . միջատներէն ալ ասով կը տարբերին որ արիւննին պղտի շրջան մը կ'ընէ . փորոտիք ունին , և պղտիկ սրտի պէս գործարան մը :

Արդերը գրեթէ բոլորն ալ ցամաքի վրայ կը բնակին . ոտուրնին ալ երկայն ըլլալով ու դիրքերնին բարձր քալելու ու ցատքելու խիստ յարմար են , և ոտքերուն ծայրերը երկերկու բարակ ու սուր պղտի ձանկեր ունին . իսկ ականջ ու հոտառութիւն ունենալին չգիտցուիր : Իրենց գըլխուն վրայ ու դէպ 'ի առջին լուսա-

ւոր կէտեր կ'երենան որ աչքերն են : Այսոնց մէկ գեղեցիկ յատկութիւնն աս է որ հիւթ մը ունին որ մետաքսի թելերուն պէս երկնցընելով կանոնաւոր կերպով ու սքանչելի ձարտարութեամբ կը լարեն իրենց որոգայթը . ետքը իրենք ալ դարանինստած՝ որսի կը սպասեն : Այս կպչուն ու առածգական նիւթը փորերնուն մէջ ինչէն պատճառիլը ամեննեին չգիտցուիր :

Արդերը երկու կարգ կը բաժնուին , և իրարմէ կը տարբերին իրենց շնչառութեամբը :

Դաս Դ . Ակադ :

Արդաւս կ'ըսուին ան ողնայար չունեցող կենդանիները , որ ոչ ձկան պէս շնչառութեն ականջ ունին և ոչ արեան շրջան . իրենց մարմնոյն չորս դին ծակ ծակ ըլլալով ան ծակերէն շունչ կ'առնեն : Աչ սիրտ ունին , և ոչ ներսի ոսկոր . բերանին մէկ վարի ծամելիքով մը բաղկացած է , կամ դիմացէ դիմաց երկու ակռայ ելած՝ որ իրենք իրենցմէ կը շարժին . շատն ալ օղակի պէս բերան մը ունին որ խողովակի նման այլեայլ կը տորներէ բաղկացած է , ծայրը սուր , և ներսի կողմը մետաքսի նման հիւթով մը պատած : Իսկ թիթեղնիկները՝ բերնի տեղ տեսակ մը գործիք ունին որ ուզած ստեննին կը կլորեն կամ կը պլեն , և կ'ըսուի լեզու : Ասոտ պատիճ մըն ալ ունին՝ որով կը ծծեն իրենց ուզած հիւթը . երբեմն ալ ծծելու համար մասնաւոր գործարան մը կ'ունենան , որուն ծայրը սուր է , մէջն ալ փողի պէս ծակ . անով կենդանին ուրիշ ձեմիներուն մարմնոյն վրայի մաշկը ծակելով անոնցմէ ելած հիւթը կը ծծէ : Այն ալ գրեթէ երկերկու շարժուն և յօդաւոր եղջիւրներ ունին , որ թէպէտ ինչ բանի գործածելնին ստոյգ չգիտցուիր ,

բայց հաւանական կ'երենայ որ առարկաները շօշափելու կը գործածեն :

Ո՞ի ջատներուն շատը երկու աչք ունին, բայց շատ աչք ունեցողներ ալ կան. և արտեանունք ամենևին չունին : Երկու աչք ունեցողներուն աչքին կազմութիւնը երես երես ու անկիւնաւոր է. իսկ երկուքէն աւելի ունեցողներունը՝ երկուքը բազմանկիւնի են, մնացածները շիտակ :

Ինչուան հիմա միջատներուն բաժանմանը վրայ շատ տեսակ վարդապետութիւններ եղան. մենք անոնցմէ իրեք գլխաւորները միայն ընտրելով հոս դնենք. առաջին՝ Առւամմերտամի վարդապետութիւնը որ կերպարանափոխութեն վրայ հաստատուած է : Երկրորդ՝ Ի իննէոսինը, որ բաժնեց անթեւ և թևաւոր կենդանիներ՝ իրենց թևերուն շատութեանը, պընդութեանը, դիրքին, և անոնց մակերեւութիւն նայելով : Երրորդ՝ Փարբիկիոսինը, որ բաժնեց անոնց բերնին ձեր դիտելով :

Հիները զմիջատները մէկ կարգ մը միայն կը սեպէին, և ամենևին ցեղ ու տեսակ չէին զատեր : Հիմայ ալ միջատները թէպէտ այլեւայլ ցեղ կը բաժնեն՝ իրենց նմանութեցը ու յատկութեանցը նայելով, բայց միշտ մէկ ընդհանուր դասի մը վերածած են :

ԽՈՒՄԲ ԶՈՐՐՈՐԴ:

Դասագայթաչե էնդանիներ :

Այս չորրորդ խումբը կ'ըսուի նաև կենդանաբոյս, վասն զի դրսի ձեւերնին բոյսի կը նմանի, և կենդանեաց պէս ալ զգացմունք ունին : Ասոնց մարմնոյն կազմուածքը խիստ պարզ է, և արեան գործարան դրեթէ ամենևին չունին . կարգաւորեալ զգայարանքներ ունենալու տեղը՝ իրենց անդամները կուրծքերնուն վրայէն անկանոն կերպով մը երկնցած են, որով բոյսի ձեւ կ'առնեն : Ամանապէս

ոչ կարգաւորեալ զգայութեան ջղեր ունին և ոչ ուրիշ ներքին կատարեալ գործարան . ոմանք հազիւ շնչառութեան գործարան ունին, և քանի մը արեան երակներ . իսկ մեծ մասը կերակուրը պահելու համար պարկ մըն ալ ունին :

Ինդհանրապէս աս չորրորդ խումբին կենդանիները իրարու շատ նման և մսոտ ու զգայուն են :

Ինախօսները աս կենդանաբոյսերուն աւելի կամպակաս կատարեալ ըլլալուն նայելով՝ այլեւայլ մանր ցեղեր ալ բաժնեցին :

ԴԱՍ Ա. ՀՈՄՆԱԼՈՐՔ Pedicèles.
ՓԸԱՍՈՐԹՔ Ապոdes.

ԴԱՍ Բ. ԽՈՐՉԱԲՆԱԿՔ Cavitaires.
ԲՆՏԵՐԱՆ ԱԼԵՐՆԱԿՔ Parenchymataires.
ԿԱՆՔ ՀԱՅԵԼՈՎ

ԴԱՍ Գ. ՎԱՐՊՔ Simples.
ԿԾՈՂԱՆ ՖՐԱԲԱՇԽԱԿԱՆՔ Hydrostatiques.
ԿԱՆՔ ՀԱՅԵԼՈՎ

ԴԱՍ Դ. ՄԱՊՆՈՐՔ Charnus.
ՊՈՂԱՊՈՂՔ ԱԼԵՐՆԱԿՔ Gélatineux.
ԱՊԱՃՃԻՔ ՀԱՄԱՍԵՐՔ A polypiers.

ԴԱՍ Ե. ԹԱՎԱԼԱԿԱՆՔ Rotifères.
ՁՐԱՃՃԻՔ ՀԱՄԱՍԵՐՔ Homogènes.

ԴԱՍ Ա. ՓՀԱՅԻՐԵՒՄ :

Այսուք ամէնն ալ մասնաւոր փորոտիք ունին, և շնչառութեն համար ու արեան պղտի շրջանի համար գործարաններ . աս դասին տակը կ'իյնան ծովու շագանակը, ծովային աստղը և ծակոտիէն ըսուած կենդանաբոյսերը: Այլինները կը բնակին ծովուն խորտեղուանքը, մասկեր են, ու շատ հաւկիթ կը ձգեն . իսկ մէկաները ծավեզերքը կը բնակին, ու ալէկոծութեան ատեն քարաքոսներու կը կպչին, և քարերու վրան կամ տակը կը բնակին . վասն զի իրենց մորթին

1 Գ. Էchinodermes. 4 Գ. Պ. Polypes.

2 Գ. Ինտեստինաք. 5 Գ. Ինֆուզուր.

3 Գ. Ակալեփես. 6 Գ. Հոլուրիւր.

վրայ մանր մանր կոծիծի պէս մնի կտորուանք ըլլալով , ասոնցմով կը կպչին անոնց վրայ , և երկայն ատեն այնպէս կալած կը մնան :

Դաս Բ . Բնդերականք :

ԱԱՅՑՆԻ չէ թէ ասոնք շնչերակ կամ շնչառութեան գործարան ունին թէ չէ : Երենց մարմնոյն ձեւը երկայն կամ տափակ կ'ըլլայ , և ներքին գործարանները շիփ շիտակ դէպ 'ի իրենց մարմնոյն երկայնութիւնը շարուած են : Ասոնք ան տեսակ ՃՃիներուն կարգէն կը սեպուին որ ուրիշ մարմնոց մէջ կը գտնուին , ինչպէս մարդուս մարմնոյն մէջինները և հասարակ փորու ՃՃին՝ որ ինչուան հարիւր ոտք երկայնութեամբ կ'ըլլայ , և մեծերը մինչեւ մէկ բթաշափ հաստութիւն կ'ունենան : Աս ՃՃինները մարդուս փորուն մէջ այնպէս կը կպչին կը մնան որ սաստիկ գեղերն ալ չեն կը նար երգեմն զասոնք դուրս հանել :

Դաս Գ . Լիճողականք :

Աս դասին կենդանինները շնչառութեան գործարան և արեան շրջան չունին . ձեւերնին կլորակ ու Ճառագայթածե է . բերաննին պարկի պէս կը բացուի , և մէջէն ոտուըներ դուրս ելած են , անոնցմով կը քալեն ու բանի մը կը դպչին :

Աս Ճառագայթածե . կենդանիններէն մէկն ալ մեղուսան՝ է , որուն մարմինը կէս թափանցիկ ու կակուղկեկ կը Ճիկի պէս նիւթ է . մարմինը ընդարձակելով ու ամփոփուելով՝ ծովուն մէջ կը լողայ . ասոր մեծը ինչուան քանի մը ոտք տրամագիծ կ'ունենայ , և ինչուան յիսուն լիպրէ կը շողը գտնուած է : Ասոնց մէջ կայլակնածե՝ ըսուածները ամէն տաք երկրի ծավերուն մէջ կը գտնուին . իրենք եր-

կայնածե փամբուշտի կը նմանին . գլուխնին դէպ 'ի վեր տնկուած , ու քովստի ծւած և կնծուած է , և քովերէն մատ մատ մսեր կախուած են :

Դաս Դ . Պողիպոդ :

Այսուքալ սառնորակ կենդանիններ են . իրենց բերնին չորս դին ջղոտ մըսերով պատած է , ստամոքսն ու փորոտիքը՝ փորու ՃՃիններուն պէս պարզ են : Աս կենդանիններն երկայն ատեն ծովու խոտ սեպուած էին , վասն զի մեծ մասը նոր նոր Ճիւղեր կուտան , և ամէն մէկ Ճիւղերը մէյմէկ գլուխ կը սեպուին :

Աս դասին տակը կ'երթան նաև սանտր՝ ըսուածը , թեաւոր պողիպոդը , բուստը՝ , և սպունգները :

Դաս Ե . Վ բաճճէ :

Վ բաճճէ կ'ըսուին ան պղտի ՃՃինները՝ որ միայն մանրացուցով կը տեսնուին հանդարտ ջրի մէջ . մեծ մասին մարմինը թափանցիկ է , և փորոտիք չունին . ոմանք ալ ստամոքս մը և մէկ քանի շարժուն գործարաններ միայն ունին :

Վ հա այսպիսի բաժանմունքով ու դասաւորութեամբ երկրիս վրայի ամէն տեսակ կենդանինները բնապատումին քննութեանը տակը կ'իյնան , ու ո՞ր և իցէ ուսումնասէր և խելացի ու դիտող մարդուն միտքը կը զմայլեցընեն իրենց սքանչելի կարգերովն ու զանազան գեղեցիկ յատկութիւններովը : Աս զարմանքը և զմայլումը աղէկ կը բացատրէ իր անուշ ոչովընաև Ուսին գաղղիացի բանաստեղծը յաջորդ հատուածին մէջ՝ որ հաւատարիմ թարգմանութեամբ հոս կը դնենք :

1 Գ. Տaenia.

3 Գ. Փysalie.

2 Գ. Մéduse.

4 Ք. Կ. անուան :

Ժի՞կէն ընդ փիզն իսկ զարմանամը ընդ վայրագ
Որ յուսն ՚ի յազթ կրէ զանհեթեթն աշտարակ,
Եւ ընդ ծանու գնայ ընդ կահին աննըկուն,
Արհամարհէեալ զայն իբր ըզբեռն ինչ ըլփուն,
Աւլու ոչ նըւաղ ընդ արզմաքնակդ իսկ ընդ քեզ
Ապշէմ, որ զհես քոյին ըզբանս քո ձրգես:
Եւ զոր յաճախ սրտամըտութիւն իմ արդար,
Փիզծըդ ժըժմակ, խորտակէ գքեզ ոտքնհար,
Մինչ դու զբոյոց երկայնաձիդ դիտակաց
Մերթ ամիբոփիես ըզիրաշակերտ յօրինուած,
Եւ վեր ՚ի վայր պարզես մերթ զայնս ըստ հաճոյս
Եւ յանդիման առնես աշացս իմ ըզբոյս,
Որ ամբառնան ըզմոյթս իւզեանց և ըզիւէ,
Ըզարժականս աստիճանաւ յելքէջ:

Ի գուզնաքեայն յէից յանտեսն՝ ՚ի հաստուած
ինձ հրաշագոյն արուեստ հաստցն է ձեռաց :
Ընդ դաշտավայր ծածկեալ ՚ի հասկ ՚ի յատոք
գանձէ պարէն իւր առաւա ազգ նախահոգ ,
Վաստակաբեկ ՚ի ծանրակիր աւարէն
Եւ ընչասպառ ռահողոք տըկարը հասանեն
Ի ստորերկրեայս կուտել յամբաւ ՚ի իրջախա
Ի շուեմարանս հասարակաց զարմուխի .
Որով զմբրջեան ազգ և զմարդկան հաւասար
Խնամեալ հանուրցրս կերակրէ էից հայր :

Այսպէս սընեալքս ՚ի նմանէ էքս համօրէն
Սահեալ գընամք, չեք վերադարձ մեզ այսրէն,
Մինչ օգաբնակ թիթեռն ՚ի լցոս գայ թըռչուն,
Այն որ ըսպաս ընծայելով անկայուն
Բուռից ծաղկանց, յափշտակէ ՚ի նոցունց
Ըզհիւժն որ ոչ նըմին պահեալ էր ՚ի ծուծ.
Եւ որ նըսեմ երբեմբն կեանս ընդ երկիր
Ընդ համազգեաց ճըգեալ սովորց ընդ ջողիր,
Որ արհամարհք են արդ նըմին և խոտան,
Հնարէր զանշուքն իւր ըսկօղել կերպարան։
Այլ ժամանակն յեղաջրջեալ վաղանցիկ,
Եւ մահ ՚ի քուն փոխեալ նըման աւասիկ,
Ճամանչագեղ զարթնու ՚ի կեանըս փառօք,
Ըզթանաձր ՚ի բաց նորին ՚ի չիրմին թուղեալ լոկ.
Եւ թեածեալ ընդ օդս ՚ի թուիցս վըսեմ,
Յածեալ շըրջի արփիագնոց լուսաճեմ։

Որդնիկդ , որ ինձ ազնըւական կազմես ձորճ ,
Քանի՛ ըլքնաղ սուլվ վաստակոցդ է բոց գործ .
Վասն իմ ուրեմն գու ծնանիս ՚ի կեանս յայս ,
Զայդ ընդ երկոցդ առնուն և կեանք քոյին կայս :
Դու բազմահոյլ թողրուս ժառանգս արուեստիդ-
Ի հայրենի որբս ՚ի տեսոյ չկը ծնողիդ .
Ոլդամը ըզքեղ , լինիմ ընդ քեզ կարեկից ,
Ինձ ըզքոյցդ անկ լեալ խօսել ըզհրաշեց :
Ա. Յ. յօրինել ըզմիրաժիր մեղուաց երդ ,
Ա. մ. Ն. կ իոսիեաւս . ու այս ումեր ապահի երկ :

PCF U. 802. 153.

“Եւշ չափին աւագի լուսաւոնէր :

ՊԱՐՆԱՆԱՑԻՆ գեղեցկութեանց
մէկն ալ տեսակ տեսակ թուզունե-
րուն ծառերու վրայ լեցուիլն է, «
ըստ կարծես թէ հոգիու կենդանու».

թիւն կուտան լեռներուն դաշտերուն
ու պարտէզներուն դալարութեանը :
Ո՞անը ու սիրուն թռչուններէն մէկ
քանին ալ հոս դրուած պատկերին
մէջիններն են : Դուածինն ու երկրորդը
տաճկերէն գլուխ կամ խոժինոց
ըսուածն է , որուն հայերէն լիանե-
փուկ կրնանք ըսել : Ծոր կռնըկին
վրայի գոյնը մուլթ դեղին է՝ սևկակ
բծերով , փորուն գոյնն ալ մուլթ ձեր-
մակ է . բայց արուեին գոյները գար-
նան ատենը կը փոխուին ու շատ կը
գեղեցկանան : Դմառը լեռնոտ տե-
ղուանք կը բնակի , բնակած կողմերն
ալ կամ խիստ բարձր են կամ խիստ
ցած . հոկտեմբերի սկիզբները խում-
բով տեղէ տեղ կ'երթայ : Դայնը թռւ-
փերու կամ պատիկ ծառերու մէջ կը շի-
նէ . դրսի կողմը բարակ շիւղերով կը
պատէ , խսկներսինը բուրդով : Հաւկի-
թը կլորակ ու բաց կապուտ է՝ կարմ-
րագոյն բծերով : Ոիրած կերակուրն է
կանեփ ու կտաւատ . անուշ կ'երգէ
ու դիւրաւ կ'ընտանենայ :

Եշրորդ ու չորրորդ թռչնիկները
տաձկերէն սագա գուշւ ըսուածն է,
որ գրեթէ ամէն տեղ կը գտնուի ու
ամենուն ծանօթ է։ Կտուցը ձիշդ կո-
նոնաձե է, և քիչ մը աւելի երկայն ու
սուր ։ Գլուխը կարմիր, թեւերը դե-
ղին ու սե, և խիստ անուշ կ'երգէ։
Վսիկայ արհեստով երգելալ կըսոր-
վի, ու շատ տեսակ խաղեր կ'ընէ։
Վոյնը միջակ բարձրութեամբ ծառե-
րու վրայ կըշինէ, և աւելի խժային
բոյսեր կ'ընտրէ, ուստի նոձին՝ առե-
նէն աւելի կըսիրէ։ Վնութեամբ
կասկածոտ թռչուն ըլլալով, շատ
կերպերով կ'ըլլայ ասոր որսորդու-
թիւնո։

Հինգերորդն ու վեցերորդը ռամ
կօրէն խտէնէ ըսուածն է, որ կտուցին
կողմանէ առջիններէնքիչտարբերու-
թիւն ունի, բայց գունովը շատ տար-
բեր է . վասն զի ասոր վրան տժգոյն
կանաչ է, իսկ փորր դեղին . թևն ու

• 164 •